

կը պատմէ ծանրը դաշնակն  
 Որ մինչ կ'անցնիս կ'երթաս դուն  
 Սէրն աշխարհի մէջ թողլով,  
 Ես պիտ' ասարիմ չըտիրուած:  
 Դեռ քսած տարի, երսուն տարի տակաւին  
 Պիտ' աշխարհի մէջ քաջքընեմ, ո՛վ Նիշէ,  
 Կեանք մը աքխուր միայնիկ...  
 Եւ զի քեզ սէրը կը կանչէ, ապրէ՛ դուն,  
 Ու թող որ ես մենախմ անոքս, անտէրունչս...

✱

Բայց չես չըրջեր զլուսըդ դուն,  
 Չեմ տեսներ ես քու դէմքըդ, չեմ տեսներ ես  
 Փու աշուրներդ երազուն,  
 Ուր կը նուաղի զըզուանքի տենչ մ'ըղձակաթ,  
 Որ միշտ կաթիլ մ'աքցունք կարծես կը դողայ—  
 Ես մարդկայինս՝ զանաամած՝  
 կը համբուրեմ ճերմակ ըզգեստդ, ո՛վ Նիշէ՛

Աստուածային, որ պիտի վաղը մենիս:  
 Երանըր դաշնակը կ'ըսէ.  
 Դուն որ կը ծնաս աշխարհում, սէր կը հայցես,  
 Մի՛ ժամանակ կորսնցնենք, մի՛. սիրէ՛,  
 Տանջուողն՝ անյոյսը սիրէ՛.  
 Դուն որ տըկար՝ մենիկ ես,  
 Տըկարներուն, մենիկներուն համար դուն  
 Եղիր ուժեղ եւ հըզոր.  
 Ըրէ՛ որ մահը ջրբախ  
 Փոսը բանայ մարմնոյդ, հոգիդ՝ բաժնուած  
 Երբ սարսըռուն պատաններու, եւ լուծուած  
 Լուսափըթիթ հիւլէներու անհամար,  
 Ըլլայ արդէն համբուրած  
 Քաղցր հոգիները մենաւոր՝ որ կու լան  
 Երկրի վրայ. սիրէ՛ դուն, սէրն անհուն է,  
 Վաթնեզի ցաւն անհուն է:

(Մորիկոմբ)

Թրգմ. Հ. ԱՍԵՆՆ Գ. ՂԱԶԻԿԵԱՆ

## Թ Ե Ր Թ Ո Ւ Մ Ա Յ Ո Ղ Ա Յ Ա Ն Ե Ր

Անգամ մ'ալ լսեցէք եւ տեսէք ցաւերս ուր լցուած  
 ես ամէն դառնութիւնները ուշխարհիս:

Եղբայր, ինծի դարձեալ նոր վերցիր կ'ուզեն տալ,  
 Ընէք ինծի, սրտիս վրայ խոցելու առի ծագ:

Մահը փռտ մարմնովը փարեցաւ ինծի: Ամպը չուք  
 Ըրէք, կրակ է ինկած սրտիս մէջ:

Դանիւնն ուճիւրները մէկ մէկ կ'ամրեցի, անոնք աւելի  
 էին քան աւերուները անտառին:

Խաղաղութիւն քարոզեցին, դարձեալ վիշտը մեզ  
 գիմարեց, մեզի մեր միսիւրին մէջ թաղեցին:

Ես սուգի ուղին բռնեցի, կրակ տառերով արգարու-  
 թեան խզիւն վրայ ցաւերս քանդակեցի:

Ո՛վ Նահապանները ցեղիս, երբ ձեր շիրմին առջեւ  
 ձեռք զետեսամած, կը զգամ թէ ինչ է հմայքը նայ  
 հաւատքին:

Ցաւերուս ուղիների մէջ բանտուած, յիշեցի նայրե-  
 նիքիս կըկըլլուր ուր կաթնաղբիւրը կարմիր էր ներ-  
 կուած:

Եղբայր, եթէ անգամ մը ես քեզ գիմարեմ մահը,  
 Ընէ որ մայրիկին խոգիւն մէջ հատաշխուր շուշ չէ  
 ձեռքս:

Նշաւուն ուր ցեղիս բազմը կ'երազէի, անոր զեկը  
 դարձեալ մանուան ձեռք է անցած:

Յիշերս մէկ մէկ կ'ան կորիսն առաջուր, ալիս  
 Բնչկէս կարիւրի է դժբաղդութիւնը տունէն դուրս հանել:

Տատարան ինչպէս չի լայ, երբ իր բոյնն է աւեր,  
 տարին մէջ կանանչ աւերի մը չէ ձեռքեր:

Ի՞նչ անէ՞ք սեւ հակատաղբիւր. յոյսը մեզ խաբեց,  
 բազմը մեզ մուրցուց, մահը մեր ուսուանին բանալին  
 կտորեց:

Հոն ուր արեւը կը ծագի, ապրիլի ծագիկ մը չի քա-  
 ղած, խաչի ճամբուն ծայրը մահը մեզ գրկեց:

Կունկ, մեր Գողգոթային ուղին երկար է, խիստ  
 երկար, թողիքովդ մի լափեր շուտով. կը յոգնիս:

Արեւելքի զաւակ, առուդ կրակ է ինկած, բայց դուն  
 արեւածաղիկ պէս դարձեալ Արեւուն կը դառնաս:

Ազատութիւն, քեզ դանկու համար հազար թիւք  
 կամբարներ կտրեցի, դուն արեւուն շափ հզոր, քեզ մե-  
 տէն դիտեցի, աչքս կուրցուցի:

Կատրիս անիւները կտորեցին, դրախտի համբան ցոյց  
 տուին... Կեղծի ինչ փոշի շողալով ուղիս:

Ո՛հ ինչ նշանութիւն... սպաննացող խոսքերով ոճրա-  
 դործին ձեռքերը փորձեցին զերբանի մէջ փակել եւ  
 արցունքներով ցեղիս նրգնը մարել:

Ինչպէս մոռնալ դանիւններուն ուճիւրներն անպատում  
 Սրբութիւնով քեանաւոր ցեղիս շրիթները ողբեցին:

Երազներու անոյշ կաթով զանգուած սուրբ մեռնող  
 Կուրիներու զանգուարներուն քանցին:

Օրհնակ խաչմանները ոսկեկաւ, շամբուշներուն ծուփ  
 ծուփ ծիծերուն վրայ շարք ձեռքեցին:

Եւրոպայի խիզը մեր գանձանակին ստիճովը զնեցին,  
Թուրք մարզարէին բանակովը զժողովին գուռը մեր  
գրախոսին մէջ բացին:

Չախ ձեռքով արգարութեան կշիռը ամենուն ցոյց

ստեղծ, և ալ ձեռքով սուրը մեր ցեղին սրտին մխեցին:

Բանադի տաճարին մէջ մեր մտքը տանցին. Բեթղեմիսի  
աստղը մեր սուգին մէջ թաղեցին:

Վերջապահ մեր աքիճով կարմրեցեցին, զազադին  
մէջ զերութեան շղթան լուծեցին:

## Ս Ե Ի Ճ Ա Կ Ա Տ Ա Պ Ի Ի

Մայր իմ բազդէ վառ արհուուն մէջ ստոնցաւ:

Ո՞նց ոտքերդ զլթայցեց ինչպէս քարէի:

Մայր իմ գուն ալ շատ հառաչեցիր, աստղիդ լոյսը  
մարեցիր:

Կեանքդ սեւեռեցին, լոյսին ծաբաւի աչքերդ կուր-  
ցուցին:

Մայր վզէդ կախուցաւ և բազդիդ մեղքը ծծեց:

Դարհիւնները զղլումի գիմակով քեզ լացին:

Քեզ թաղողները, ոսկի լեզուով յարութիւնդ քա-  
րողեցին:

Մայր իմ, քիչ կ'ուզես որ քեզի ըսեմ կամ գրեմ,

կ'ուզեմ որ զերեզմանիդ շուրջ հարիւր հազար այ-  
ծանաւոր շար շար, սեւ ճակատաւորդ ողբերգեն:

Հաւակին մէջ այլևս թխակ չի մնաց, մայր իմ ինչ-  
պէս քեզ փրկեմ...

Մայր իմ, մեր հողին վրայ օնը մաս մաս կտրեցին,  
սնի դարձեալ միացաւ, զլուխն ողջ էր ապրեցաւ:

Դարհիւն մահուան հսկայ թիւերով մեծ ուրիշին դե-  
րեզմանը ծածկեց:

Բռնակալը Սաթիւովաթի նման երկինք վերացաւ,  
կեղծ արցունքներ տնջեցին, իր ցեղին նախնիները

լուաց:

Մայր իմ, մեծ էր երգիւն մեր երկրին, ծովերը մէկ  
մէկ ցամաքացան, չկրցան մտնել մեր տունն ինչպէս կրակը:

Հազար հազարներով ուղտեր զոհարեցեցով բռնաւո-  
րեցին,

Իկու բեր բազմոցները դրախտաւառի փեռուրներով  
լեցուցին,

Ալանակաւ կառքիդ հազար զոյգ եղնիկներ լծեցին,  
Երամայի թագաւորը ոտքդ գերի բերին,

Փոխարէն համարը մ'ուզեցին:

Արիւնովդ վիշտ խաղը լուացին,

Հաւաքող ալ աւելի զորացուցին:

Հ. Ս. ԵՐԵՄՅԱՆ

## Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Լ Ե Զ Ո Ւ Ն

(Տես Բազմավեպ 1920 էջ 167)

## Ի Ի Բ Ա Ք Ա Ն Զ Ի Ի Բ Ն Ի Բ Մ Ա Ս Ը Թ Ո Ղ Ա Ռ Ն Ո Ւ

Արեւելքի զանազան գաւառներէ ժողովաւ  
մանկանց խումբի մը:

Դաւառաբարբառի բացատրութեանց վը-  
րայ խնդացիք, այնպէս չէ: Նոյնը չեմ  
կրկնեմ: Բայց շատ ուժով մի խնդաց,  
կ'ըսեմ, անոր վրայ, վառն գի ոչ թէ  
միայն այս կամ այն ինչ ընտանեաց մէջ է  
որ աղաւաղուած հայերէն կը խօսուի,  
այլ կրնամ ըսել նոյն իսկ թէ ուրիշ  
երկիրներու հազարաւոր ընտանեաց մէջ  
ալ, որոնցմէ ևս կարելի է օրինակներ մէջ  
ընել իրենց եզակի բացատրութիւննե-  
րով, և որոնք բոլոր զձեզ պիտի խնդացնեն  
բացի մէկէ մը: Կ'ուզէ՞ք որ փորձենք:  
Կը փափաքե՞ք որ օրինակով ապացուցա-  
նեմ: Եւ ես կըրցածիս չափ և շուտով զձեզ  
կը գոհացնեմ:

« — Նախ քեզմէ սկսիմ, ո՞վ փորցրիկ  
Ռուսահայ:

— Հէնց դրանու մէջ է ձեր սխալը որ  
չէք իմանում թէ մի տղամարդ, թէկուզ  
ամենից լաւ, մի համալսարանում էլ սովո-  
րած լինի, չէ կարող, — այսպէս ասած, —  
Հայերի ստատիստիկայի մէջ մի սոսկ թիւ  
էլ դառնալ, եթէ նրան չի աշոգոտի, մի  
հայի պատահելիս, իր մտքերը բացատրել  
էն բարբառով, որով նրա պապերն են  
խօսացել: Վերցրէք օրինակ Տիֆլիսեցի  
մի տղամարդ, որ կերմանիա է եղել,  
համալսարանի մի ֆակուլտետում հետեւել  
է ֆիլոլոգիայի կամ ֆիլոզոֆիայի դասըն-  
թացքի, նա կըթուած անհատ է դառել,  
և շամփանքի մի գաւաթի առաջ՝ ա-  
ցիախտակաւ սկզբունքներ վրայ կարող  
է մի ինչ որ երկար ճառ ասել, ինչքան  
հարկ է, որպէս զի նրան մտիկ տալիս  
քնափութեան մէջ ընկնիս, և երազումդ՝  
նրա սոցիալ — դեմոկրատ իտեալ աշխարհին  
տեսնիս: Խօ, ասացէ՛ք, էնպէս չի: Դա